«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-251-13.08.2019-ՏՏԳԲ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը «Հայաստանի Հանրապետության անտառային օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-252-13.08.2019-ՏՏԳԲ-011/0) (այսուհետ՝ նախագիծ) վերաբերյալ:

1. Նախագծի 1-ին հոդվածով առաջարկվող փոփոխությունն ընդունելի չէ, քանի որ լուսավորման, մաքրման, նոսրացման և անցումային հատումները խնամքի հատման հիմնական տեսակներ են:

2. Նախագծի 2-րդ հոդվածով առաջարկվող փոփոխության անհրաժեշտությունը չկա, քանի որ օրենսգրքի 4-րդ հոդվածը հստակ սահմանում է անտառային հողերի սեփականության ձևերը:

3. Նախագծի 3-րդ հոդվածով առաջարկվող լրացումն ընդունելի չէ, քանի որ պաշտպանական և հատուկ նշանակության անտառներում անտառվերականգնման հատումների իրականացում չի թույլատրվում:

4. Նախագծի 4-րդ հոդվածով առաջարկվող փոփոխություններն ընդունելի չեն, քանի որ համաձայն օրենսգրքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի՝ պաշտպանական նշանակության անտառներում արգելվում է անտառվերականգնման հատումների իրականացումը, իսկ համաձայն օրենսգրքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի՝ հատուկ նշանակության անտառներում արգելվում են անտառօգտագործման այնպիսի ձևերը, որոնք չեն համապատասխանում այդ տարածքների պահպանության՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ռեժիմին:

5. Նախագծի 5-րդ հոդվածով առաջարկվող փոփոխությունն ընդունելի չէ, քանի որ ըստ էության՝ խնամքի հատումը միևնույն միջանկյալ հատումն է կամ դրա տեսակը:

6. Նախագծի 6-րդ հոդվածով առաջարկվող փոփոխությունն ընդունելի չէ, քանի որ լուսավորության, մաքրման, նոսրացման, անցումային հատումները խնամքի հատման տեսակներ (փուլեր) են:

Հարկ ենք համարում տեղեկացնել, որ համաձայն «Հայաստանի Հանրապետության կառավարության 2019-2023 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաս-

տատելու մասին» N 650 – Լ որոշման 89.1-ին կետի՝ ներկայումս ՀՀ շրջակա միջավայրի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) կողմից մշակվել և քննարկման փուլում է գտնվում «Հայաստանի Հանրապետության անտառային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը, որը ՀՀ կառավարության քննարկմանը կներկայացվի սահմանված ժամկետում՝ 2019 թվականի նոյեմբերի առաջին տասնօրյակում: Նախարարության մշակած նախագծում Հայաստանի Հանրապետության անտառային օրենսգրքի մի շարք հոդվածներ փոփոխվել են, մի մասն էլ ուժը կորցրած է ճանաչվել:

Նախարարության կողմից մշակվող նախագիծը Հայաստանի Հանրապետության կառավարության հավանությանն արժանանալուց հետո կներկայացվի Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի քննարկմանը:

Ելնելով վերը շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունն առաջարկում է նախագծով քննարկվող՝ ՀՀ անտառային օրենսգրքի գործող հոդվածները թողնել անփոփոխ և, ըստ անհրաժեշտության, նախագծի դրույթներին անդրադառնալ առաջիկայում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի քննարկմանը ներկայացվելիք՝ Հայաստանի Հանրապետության կառավարության օրենսդրական նախաձեռնության քննարկումների շրջանակներում: